

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ԳԼՈՒԽ 15. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 207. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

~~Զինապարտների կողմից "Զինապարտության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 5-6-րդ հոդվածներով **Զինապարտ քաղաքացու կողմից «Պաշտպանության մասին» օրենքի 22-րդ հոդվածով** սահմանված զինվորական հաշվառման կանոնները խախտելը՝~~

~~առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:~~

~~Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումների թվից մեկ տարվա ընթացքում կրկին խախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:~~

~~ՀՈԴՎԱԾ 213.1. ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՑ, ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱՐԱՅԻՆ, ՇՏԱՐԱՅԻՆ~~

~~ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻՑ ԿԱՄ ԶՈՐԱԿԱՂԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ~~

~~1. Պահեստագրում հաշվառված զինապարտ քաղաքացիների կողմից վարժական հավաքներից խուսափելը, որը կատարվել է զինկոմիսարիատի կողմից տրված ծանուցագրում նշված ժամկետում առանց հարգելի պատճառների զինկոմիսարիատ չներկայանալու ձեռով՝~~

~~պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:~~

~~2. Պահեստագրում հաշվառված զինապարտ քաղաքացիների կողմից հրամանատարաշտաբային, շտաբային վարժանքներից կամ զորախաղերից խուսափելը, որը կատարվել է զինկոմիսարիատի կողմից տրված ծանուցագրում նշված ժամկետում առանց հարգելի պատճառների զինկոմիսարիատ չներկայանալու ձեռով՝~~

~~պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:~~

~~ՀՈԴՎԱԾ 213.1. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻՑ ԿԱՄ
ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ~~

~~1. Պահեստագրում հաշվառված զինապարտ քաղաքացու կողմից օրենքով սահմանված կարգով հայտարարված զինվորական վարժանքներից կամ զորավարժություններից խուսափելը, որը կատարվել է զինվորական~~

կոմիսարիատի կողմից փրված ծանուցագրում նշված ժամկետում առանց հարգելի պատճառների զինվորական կոմիսարիատ կամ զինվորական վարժանքների կամ զորավարժությունների անցկացման վայր չներկայանալու ձևով՝

առաջացնում է փուզանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական փույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ փարվա ընթացքում քաղաքացու կողմից կրկին կատարելը՝

առաջացնում է փուզանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով հարգելի պատճառներ են համարվում քաղաքացու կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում հիվանդանոցային պայմաններում բուժման մեջ կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելու, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակությամբ պայմանավորված այլ հանգամանքները, որոնք օբյեկտիվորեն հնարավորություն չեն տալիս քաղաքացուն ներկայանալու զինվորական կոմիսարիատ կամ զինվորական վարժանքների կամ զորավարժությունների անցկացման վայր:

ՀՈՂՎԱԾ 235. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՀ պաշտպանության նախարարության մարմինները քննում են սույն օրենսգրքի 123 հոդվածով, 124 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով, 125 հոդվածի առաջին մասով եւ 127 հոդվածի երրորդ մասով նախատեսված (ՀՀ զինված ուժերի տրանսպորտային միջոցների զինծառայող վարորդների եւ զորահավաքների կանչված զինապարտ վարորդների կողմից կատարված), 207-~~213~~**213.1** հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

ՀՀ պաշտպանության նախարարության մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու եւ վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն.

1) սույն օրենսգրքի 207-~~213~~**213.1** հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ զինվորական կոմիսարները.